«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի ընթացքում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Լ. Սիմոնյան

Ուսումնական հաստատություն՝ 179 հիմն. դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1.Ներածություն 3
2. Գրական ակնարկ 3
3. Փորձարարական հետազոտություն 7
3.1-Խմբի նկարագիրը 7
3.2-Փորձարարական դասեր 7
3.2.1-Փորձարարական դաս-1 7
3.2.2-Փորձարարական դաս-2 8
4. Եզրակացություն 100
5. Օգտագործած գրականության ցանկ 111
6. Հավելված 122
Դասապլան-1 122
Դասապլան-2 155

1.Ներածություն

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը:Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը.դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ,այսինքն՝նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ,ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: երեխային կարելի է ոգեշնչել,մղել որոշակի գործողությունների,ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը: Անշուշտ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, ապագա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են. այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության զգացում, ինքնուրույնություն և այլն: Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային հարաբերությունների միջոցով աշակերտների մեջ ձևավորում է ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների

նկատմամբ համակողմանի հետաքրքրություն: Ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման միջոց են ժողովրդական բանահյուսությունը, ազգային խաղերը, ծեսերը, տոները, պարը, տարազը, զրույցը, ծնողի անձնական օրինակը և այլն: Որպես մանկավարժական արժեքներ՝ դրանք մեծ նշանակություն ունեն դաստիարակության ողջ համակարգի համար: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

2. Գրական ակնարկ

Կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման կարևոր գործոնն է Մայրենիի դասավանդումը, որի միջոցով երեխան սկսում է ծանոթանալ սեփական լեզվի գանձերին, սովորում է հարգել իր մայրենի լեզուն, վերջինիս էլ նպաստում է, որ երեխան սովորի հարգել նաև այլոց լեզուն ու մշակույթը:

Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է մայրենի լեզվի առանձնահատկություններով:

Այս տեսանկյունից կրտսեր դպրոցի սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում կարևոր ենք համարում դասավանդման «Դերային խաղ» մեթոդի կիրառումը: Դերային խաղի մեթոդը նաև շատ նպատակահարմար է կրտսեր դպրոցի համար, որովհետև, ի տարբերություն մեծերի, փոքրերը ամաչելու և կաշկանդվելու բարդույթն ավելի հեշտ են հաղթահարում, ավելի անկեղծ են և որգևորվող:

Դերային խաղի մեթոդը շատ նպատակահարմար է իրականացնել՝հիմք վերցնելով մի որևէ հեքիաթ կամ հեքիաթներ: Աշխատանքի սկզբում հեքիաթները ուղարկում ենք սովորողների էլեկտրոնային հասցեներին, որպեսզի մեկ անգամ ևս ընթերցեն: Հաջորդ օրը դասարանում առաջարկում եմ անսապասելի իրավիճակներ, օրինակ՝ սովորողներին առաջարկում եմ՝ պատկերացնեն, թե հայտնվել են անազատության մեջ և պետք է ելքեր փնտրեն, որպեսզի ազատվեն այդ վիճակից: Սովորողներին դրդում եմ,ելնելով իրենց կերպարի առանձնահատկություններից, բնավորությունից, կողմնորոշվել և առաջարկել, թե տվյալ կերպարը համապատասխան իրավիճակում ինչպես կդրսևորի իրեն:

Այս դեպքում շատ կիրառելի են ռոդարիական հնարները, որոնք թույլ են տալիս չսահմանափակել միտքը և կիրառել թե՛ սովորական, թե՛ անսովոր բոլոր գաղափարներընպատակին հասնելու համար: Հերթով լսելով սովորողներին և նրանց առաջարկած լուծումները, թե իրենց հերոսն ինչպես իրեն կպահի այս կամ այն իրավիճակում,մուտքագրում եմ նրանց մտքերը և համատեղ ուժերով ստեղծված նոր հեքիաթն ըստ դերերի բաժանում սովորողներին: Դերաբաշխումը կատարում ենք տարբեր ձևերով.

_պատահական բաշխում

_սկզբում բաժանում ենք գլխավոր դերերը, մնացածը՝ ըստ ցանկության

_դերերը տալիս ենք ըստ մասնակիցների՝ այդ դերերի համապատասխանությամբ

_ընտրում ենք այնպիսի մասնակիցների, որոնք ունեն առաջարկվող դերի հակառակ որակները

_ընտրությունը թողնում եմ մասնակիցներին:

Այս մեթոդով սովորողները ձեռք են բերում ինքնուրույնություն, սովորում են աշխատել թիմերով՝

մեկը մյուսին օգնելով, ազատվում են տարբեր տեսակների բարդույթներից, վախերից, սովորում են լսել միմյանց, զարգանում են նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները:

Դրական կողմերը

Դերային խաղն ունի շատ առավելություններ:

Երբ սովորողը ներկայացնում է մի որևէ կերպար, ձերբազատվում է իրեն կաշկանդող մի շարք բարդույթներից և ազատ ինքնադրսևորվում՝ խաղալով տվյալ կերպարը: Դերային խաղը նպաստում է սովորողի՝ տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը: Կան բազմաթիվ իրավիճակներ, որոնցում սովորողը փոքր տարիքում, հնարավոր է, դեռ չի հայտնվել, բայց հեքիաթի կերպարի միջոցով իրեն երևակայում է այդ իրավիճակում և փորձում լուծումներ և ելքեր առաջարկել: Դերային խաղի միջոցով սովորողը ձեռք է բերում մի շարք հմտություններ.

_ խոսքի և արտահայտչականության զարգացում

_ ընթերցանության հմտությունների զարգացում

_ աշխատանք խմբերով

_ մեդիահմտությունների զարգացում

_ հետազոտելու/ համացանցումորոնելու հմտություններ/

_ թվային միջոցները գործածելու հմտություններ

_ տեխնոլոգիական հմտությունների զարգացում

_ երաժշտության, պատկերի, գույների զգացողության, ճաշակի զարգացում

_անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում:

Համատեղ ստեղծված աշխատանքի հաջող լինելու դեպքում այն կարող է վերածվել թատերական ներկայացման:

Դերախաղերը արտացոլում են երեխաների պատկերացումները շրջակա աշխարհի, մարդկանց հարաբերությունների և մասնագիտական պարտականությունների մասին:

Բացասական կողմերը

_ Երեխաները խաղի մեջ որևէ այլ նպատակ չեն դնում, քան խաղալը: Խաղն աճող մանկական օրգանիզմի պահանջմունքն է:

_ Երբեմն խաղի ավարտից հետո մասնակիցները կարող են շարունակել ինչ-որ մի բան պարզաբանել, վիճել, խռովել իրարից, ավելին թշնամանալ, նշանակում է խաղի ընթացքում ինչ-որ բան այնպես չի եղել, և խաղը չի ծառայել իր նպատակին:

3. Փորձարարական հետազոտություն

3.1-Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի թիվ 1 հիմնական դպրոցի դպրոցի 2-րդ դասարանում:

Հաշվի առնելով սովորողների տարիքը, ես որոշեցի կիրառել «Դերային խաղ» մեթոդը, որպեսզի մեծանա աշակերտների հետաքրքրությունն ու մոտիվացիան դասապրոցեսներին մասնակցելու՝ այսինքն կարծիքներ հայտնելու, համեմատելու, վերլուծելու, իրենց մտքերն ազատ ու հստակ արտահայտելու, ինքնուրույնություն ձեռք բերելու համար:

Այս դասարանում սովորում են 17 աշակերտ՝ 11 աղջիկ և 6 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:

Մայրենի լեզու առարկան անցնում են շաբաթական 7 ժամ, այն դասացուցակում տեղադրված է 1-ին կամ 2-րդ ժամերին:

Այս դասարանի հիմնական խնդիրները.

_Կատարել իրեն տրված դերը

_Ազատ և անկաշկանդ արտահայտել սովորածը

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը՝ «Բժիշկ Այբոլիտն ու նրա գազանները» (տե՛ս դասապլան 1, էջ՝ 13):

Դասը սկսվեց հարցադրումներով, մեծ և բուռն քննարկում տեղի ունեցավ աշակերտների և ուսուցչի միջև:

Քանի որ ընտրված է «Դերային խաղ» մեթոդը, աշակերտներին հանձնարարված էր տանը մի քանի անգամ լավ ուսումնասիրել դասը, հետո յուրքանչյուր աշակերտ իր ցանկությամբ ընտրեց իր դերը: Այնուհետև երեխաները սկսեցին դերային խաղի միջոցով ներկայացնել հեքիաթի սյուժեն: Այն աշակերտները, որոնք նախկինում պասիվ դիրքորոշում ունեին դասի նկատմամբ, նրանք ևս բավականին աշխույժ սկսեցին

մասնակցել դասապրոցեսին իրենց ընտրած հեքիաթի հերոսին դերային խաղի միջոցով ներկայացնելով: Նկատեցի, որ դերային խաղն օգնել է պասսիվ և ամաչկոտ երեխաներին լինել ավելի ակտիվ և ավելի համարձակ արտահայտել մտքերը, որովհետև երեխաներին հանձնարարել էի իրենց ընտրած հեքիաթային կերպարին ներկայացնել իրենց պատկերացումներով ու բառապաշարով:

Խաղի ավարտից հետո,սովորողները բանավոր կերպով պատասխանեցին դասի վերջում տրված հարցերին, քանի որ ընտրված երեխաներին հանձնարարել էի հեքիաթը ներկայացնել իրենց բառապաշարով և պատկերացումներով երեխաները ավելի ազատ ու անկաշկանդ էին արտահայտվում ուստի նրանց պարզաբանող և ուղղորդող հարցեր տվեցի:

Արդյունավետ քննարկման, խմբերի ներկայացրած ճիշտ տեսակետների և ընտրված հաջող մեթոդի շնորհիվ աշակերտների ակտիվությունը բարձրանում էր դասին մասնակցելու, քննարկելու, պատկերացումները արտահայտելու առումով: Ամբողջ դասարանը ներգրավված էր դասապրոցեսին:

Վերը նշվածից հետո հարցադրումի միջոցով անցան նոր դասի «Գլխարկավաճառն ու կապիկները», «Մեղուն ու հավը» թեմաներ հաղորդմանը, ծանոթացրեցի նոր դասին, պատմեցի և նորից հանձնարարեց, որ յուրքանչյուր խումբ «Դերային խաղ» մեթոդով տանը պատրաստի իր թեման:

3.2.2-Փորձարարական դաս-2

Դասն սկսեցի հարց ու պատասխանով՝ անցած թեմայի վերհիշմամբ: Աշակերտները բավականին ակտիվ մասնակցեցին և պատասխանեցին անցած նյութը, որը ինչպես պարզվեց շատ լավ էին յուրացրել:

«Մտագրոհի» մեթոդով ստուգվեց նրանց գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Այնուհետև օգտագործելով «Դերային խաղ» մեթոդը, խմբերից յուրաքանչյուրը սկսեց ակտիվ ներկայացնել իրեն տրված թեման: Աշակերտներից յուրաքանչյուրը ակտիվորեն ներկայացրեց իրեն հանձնարարված հատվածը:

Դերային խաղի ավարտից հետո, աշակերտները սկսեցին ակտիվորեն քննարկել դասը: Սովորողները իրենց պատկերացումների շրջանակներում համեմատականներ անցկացրեցին ներկա և նախորդ հեքիաթների միջև: Խոսեցին դրանց հերոսների մասին, իրենց պատկերացումների շրջանակներում ներկայացրեցին հեքիաթային հերոսների դրական և բացասական հատկանիշները:Յուրքանչյուր սովորող

դասագրքից կարդաց իր խմբին հանձնարարված՝ իր նախընտրելի հատվածը և աշակերտներից յուրքանչյուրը, վերլուծեց իր ունակությունների շրջանակներում:Հաջորդիվ բանավոր կրկնության մեթոդով ուսուցանվեց նոր դասը: Վերջում հանձնարարեցի նոր թեմա՝ «Հայաստանը մեր հայրենիքն է» բաժնից՝ «Մասիս» և «Նոյի Տապանն Արարատի վրա» թեմաները:

4. Եզրակացություն

Աշակերտների ակտիվությունը բարձրացնելու, հեքիաթային հերոսների կերպարների միջոցով նրանց լավ արժեքներ փոխանցելու, սովորողներին ինքնաարտահայտվելու հնարավորություն տալու, աշակերտների հիշողությունը զարգացնելու համար անցկացրեցի 2 փորձարարական հետազոտական դասեր՝ «Դերային խաղ» մեթոդով, որտեղ համեմատաբար պասսիվ աշակերտներն իրենց դրսևորեցին բավականին ակտիվ, ամբողջ դասարանը ներգրավվեց դասապրոցեսների լիարժեք կայացմանը, հաղորդվեցին գիտելիքներ, կարծիքներ: Աշակերտները խոստովանեցին, որ իրենց շատ դուր եկավ այս մեթոդը: Նրանք մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցին տրված թեման, դիտարկեցին կապը, կերպարվեստի, «ես և շրջակա միջավայրը» առարկայի հետ: Այսպիսով, ես եկա այն եզրակացության, որ «Դերային խաղ» մեթոդն օգնեց աշակերտներին ինքնադրսևորվելու, ինքնարտահայտվելու, անկաշկանդ իր կարծիքն արտահայտելու գործում, և նպաստեց պասսիվ աշակերտների դասապրոցեսում ներգրավածությանն ու ակտիվացմանը,նրանց հետաքրքրությունների աճին ու գիտելիքների ավելացմա:ը, հեքիաթային հերոսների կերպարներով երեխաների արժեհամակարգի զարգացմանը, նրանց մեջ բարու, գեղեցիկի, լավի, բնության ու կենդանիների նկատմամբ սիրո սերմանմանը:

5. Օգտագործած գրականության ցանկ

1. Ձեռնարկ ուսուցիչների պատրաստման համար, գործիմաց մոտեցում, Տեսություն և պրակտիկա, ԱՅՈԵՔՍ, Եր., 2004, 42-45էջ:
2. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների եռօրյա վերապատրաստման ուղեցույց, «Տիգրան Մեծ», Եր., 2007, 49 էջ:
3. Սարուխանյան Ս., Դիշաջաղայան Ն. և ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, 118 էջ:
4. Գիտական հոդվածներ, մանկավարժություն և մեթոդիկա, Վանաձորի մանկ. ինստ., Վանաձոր, ՍԻՄ տպագրատուն, 2010, 389 էջ:
5. Հայոց լեզու և գրականություն: Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Եր.,2006,
6. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Եր., 1956
7. Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, «Ընտանիք և ազգային հոգեբանություն», նյութերի ժողովածու, Եր., 1991, 149 էջ:
8. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011, 160
9. Ղարիբջանյան Օ. Բ., Ժողովրդական ավանդույթները՝ դպրոցականների բարոյական դաստիարակության գործոն, Եր., «Լույս », 1978
10. Շավարշյան Ա. Մ., Հայ մանկավարժներ, Եր., 1958, հ. 1-2

6. Հավելված

Դասապլան-1

Առարկա	Մայրենի	Ամսաթիվ		Կիսամյակ	II	Դասարան	II
Թեմա	«Բժիշկ Այբոլիտը և նրա կենդանիները» Ուսուցանել «Գլխարկավաճառն ու կապիկները», «Մեղուն ու հավը»						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ						
Դասի նպատակը	Ծանոթացնել հեքիաթային հերոսների հետ Կարևորել երեխաների ճիշտ արժեքային համակարգի ձևավորումը Ձևավորել հմտություններ դասից հատվածներ կարդալու, մեկնաբանելու, վերլուծելու						
Վերջնարդյունքները	Կարողանա ճիշտ արտահայտել մտքերը Մտապահի և յուրովի մեկնաբանի կարդացածը Սովորի համեմատել ու հակադրել հեքիաթային հերոսների կերպարները Դրսևորվի հետաքրքրություն Մայրենիի դասի նկատմամբ						

Գործողություններ ժամ/տևո- ղություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով, աշա- ներտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել Հարցադրումներ	Ո՞րն էր նախորդ դասի թեման	
15ր	Աշակերտները «Դերային խաղ» մեթոդով սկսեցին ներկայացնել տրված դասը Բժիշկ Այբոլիտի և նրա կենդանիների կերպարները Վերլուծեցին, բնութա-գրեցին,համեմատե-ցին, կարծիքներ հայտնեցին: Ծանոթացան նոր կենդանիների հետ Սովորեցին նոր թեման,	Հարցադրումներով պասիվ աշակերտներին ևս ներգրավվել ընդգրկել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր Կատարել ճշտումներ և շտկումներ Ուղղորդել	Կռունկը Ի՞նչ է կռունկը Ի՞նչ արեց անտառապան Սարգիսը և ինչպե՞ս ուղղեց իր սխալը Ինչպե՞ս խնամեցին վիրավոր կռունկին Ի՞նչ է նշանակում հոգատարություն	Հարցադրու-մների մեթոդ

10ր	Ներկայացրեցին թեմայի վերաբերյալ իրենց կարծիքները	Հետևել աշակերտներին	Ու՞մ կերպարը ավելի շատ հավանեցիր «Կռունկ» դասից	«Դերային խաղ» մեթոդ
15ր	Համեմատեցին նախկինում անցած հեքիաթների հետ Ընթերցեցին նոր դասի տեքստը	Նոր թեմայի հաղորդում Հանձարարություն ներ տալ Պատասխանել աշակերտների հարցերին	Հետադարձ կապ Ի՞նչ զգաց Նազենիկը, երբ կռունկը թռավ Քեզ դուր եկա՞վ արդյոք հեքիաթը, հեքիաթի հերոսներից ու՞մ կցանկանայիր նմանվել	

Դասապլան-2

Առարկա	Մայրենի	Ամսաթիվ		Կիսամյակ	II	Դասարան	II
Թեմա	«Գլխարկավաճառն ու կապիկները», «Մեղուն ու հավը» Ուսուցանել «Հայաստանը մեր հայրենիքն է» բաժնից «Մասիս» և «Նոյի Տապանն Արարատի վրա» թեմաները						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ,						
Դասի նպատակը	Դերային խաղի միջոցով, երեխաների մեջ սերմանել ազնվություն և հարգանք Արժևորել մարդկային կարևոր արժեքները Համեմատել հեքիաթային հերոսների կերպարները						
Վերջնարդյունքները	Տարբերի և ցույց տա հեքիաթային կերպարների տարբերություններն ու ընդհանրությունները Հեքիաթային հերոսների միջոցով հաղորդակցվի մարդկային լավագույն արժեքներին Կատարի ինքնուրույն և ճիշտ եզրահանգումներ ու վերլուծություններ						

Գործողություններ /ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին Հարցադրումներ	Ո՞րն էր անցած դասի թեման Բժիշկ Այբոլիտը և նրա կենդանիները	Հարցադրումների մեթոդ
15ր	Օգտագործելով «Դերային խաղ» մեթոդը աշակերտներն սկսեցին ակտիվ քննարկել, վերլուծել նախապես տանը դիտված և ունկդրած նյութերից Համեմատականներ անցկանցնել անցածի և նորի միջև, բնութագրեցին կերպարները , կարծիքներ հայտնեցին	Խրախուսել և գովեստի խոսքերով բարձրացնել աշակերտների մոտիվացիան, հետաքրքրու-թյունն ու շահագրգռվածությունը Աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր	Ո՞վ էր Այբոլիտը և ի՞նչ էր սիրում	Մտագրոհ

	Ծանոթացան Բժիշկ Այբոլիտի հետ Նկատեցին որոշ նմանություններ և տարբերություններ մյուս հեքիաթների հետ			
15ր	Միջառարկայական կապ ստեղծվեց «Ես և շրջակա միջավայրը առարկայի հետ» Բացեցին գրքեր Կարդացին նոր նյութի համապա-տասխան տեքստը Նոր ուսուցանվող դասը սովորեցին «Դերային խաղ» մեթոդով	Հետևել դասին Հետևել աշակերտներին Կատարել ճշտումներ և շտկումներ	Կցանկանայի՞ր նմանվել բժիշկ Այբոլիտին Գնահատու՞մ ես բժիշկ Այբոլիտի բարությունը	Բանավոր կրկնության մեթոդ

10ր	Պատասխանեցին գրքում գրված հարցերին(հարցեր և առաջադրանքներ բաժնից) Վերջում ամփոփեցին ընդհանուր, գլխավոր թեման	Կատարել ճշտումներ և շտկումներ Հարցադրումներ	Քեզ դուր եկա՞վ թեման Սիրու՞մ ես Բժիշկ Այբոլտի հեքիաթը	Հարց ու պատասխան մեթոդ